

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն իր դրամագիտական հավաքածուն համալրելու նպատակով գնում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից հին ու նոր դրամանիշներ՝ մետաղադրամներ և թղթադրամներ, որոնք տարբեր ժամանակահատվածներում շրջանառության մեջ են եղել պատմական Հայաստանի տարածքում: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը գնում է միայն այն դրամանիշները, որոնք բացակայում են և անհրաժեշտ են դրամագիտական հավաքածուն համալրելու համար:

Դրամանիշերի գնման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ստեղծված է մասնագիտացված հանձնաժողով, որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի շենքում յուրաքանչյուր երկուշաբթի ժամը 10:00 մինչև 12:30:

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 59-29-03:

ՀՀ կենտրոնական բանկ